ՆՈՐ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ ՆՈՐՔԻ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆԸ

Մեպտեմբերի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Նորքի հայորդյաց տանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ նորաստեղծ համակարգչային լսարանի և բացօթյա ընդարձակ խաղահրապարակի հանդիսավոր բացումը:

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի հովանավորությամբ կառուցված խաղահրապարակում մանուկների խաղի ու հանգստի համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները: Հատելով խաղահրապարակի մուտքը երիզող ժապավենը՝ Նորին Սրբությունը և նրան ուղեկցող շքախումբն առաջնորդվեց դեպի Հայորդյաց տան մասնաշենք: Այստեղ ամբողջովին վերանորոգված երկրորդ հարկի երեք սենյակներում ամերիկահայ Սեմ Սիմոնյանի հովանավորությամբ տեղադրված է 30 նորագույն համակարգիչ: Նորաստեղծ համակարգչային լսարաններում երկու հերթափոխով կկազմակերպվեն համակարգչային ուսուցման դասընթացներ ոչ միայն երեխաների, այլև նրանց ծնողների համար:

Հայորդյաց տան հանդիսությանը ներկա էին նաև Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Կանադայի թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Դերենիկ վրդ. Դավթյանը, Նորքի թաղապետը, ամերիկահայ բարերարներ և այլոք:

Բացման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը և մյուս հյուրերը ներկա գտնվեցին հայորդյաց տների երեխաների համերգային ծրագրին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐՔԻ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆ ՆՈՐԱԲԱՑ ՋԻՆԻՇՅԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԸ.
ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՏԵՍՈՒՉ Տ. ԽԱԴ ՔԱՀԱՆԱ ՂԱՋԱՐՅԱՆԸ
ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ